

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՍ ԵՒ ԻՐ ՔԱՌԵԱԿՆԵՐԸ. —

Պարսկ. թարգմանած թարգմ. Լեոն Մելիքով.
144 էջ. Փարիզ. 1923.

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՍ, ԲԱԲԱ ԹԱԷՒՐ ԵՒ ԶԱՆԱ-
ԶԱՆ. — Թարգմ. թարգմանած Յովակի Միք-
պայիանց. 155 էջ, Թէրիամ. 1923.

Անցած տարուայ ընթացքին ունեցանք երկու
թարգմանութիւն պարսկ աշխարհաւաչակ բա-
նաստեղ Օմար Խայեամի քառեակների: Առա-
ջնը արկմուանայ լեռով Պ. Լ. Մերորապի
կողմից, երկրորդը արեկլանայ լեռով Պ. Յ. Միքրայեանի կողմից, երկուուն էլ անմիջական
պարսկ բնագրից:

Պ. Յ. Միքրայեանը Խայեամի գրքին միացրել
է և նշանաւոր քառերգու Բաբա-Թանէրի քա-
ռեակները և նասուաններ պարսկ զանազան
բանաստեղներից, որոնք բուռում են զրի մէկ
երրորդ մասը, վերջին 110-155 էջերը. այսպի-
սով կրկնակի շահեկան գործ է գառնում նրա
երկը:

Այս թարգմանութիւնները, առանց իրար հետ
համեմատելու կարգալով, առաջին ակնարկով,
հետևալ տպագրութիւնն ենք ստանում — Պ.
Լ. Մերորապի լեռուն աւելի մարուէ, է, կիրթ,
բառամթեքը ճոխ, իսկ Պ. Միքրայեաննիւնը աւ-
ելի թնարական, բայց ադքաս, խճողուած հնա-
բանութիւններով, օրինակ. — առ իս, սիրեան,
սիրեցեալ, և գուեկաբանութիւններով. օրինակ.
բող. իրունած, և այն, սակայն և մի արժէ-
քաոր առաքինութեանմը — սեղմ է ու սահուն:

Օմար Խայեամի անունով, 9 դպր յետոյ, հա-
սել է մեզ երգերի մի դիւան, որ պարունակում
է մոտ 1000 քառեակ. սակայն իր մօտիկ ժա-
մանակակիցները նրա զրքին վերագրում են 50-
80 քառեակ. աւելի յետազայի գրագէտները չուրջ
300 քառեակ. Խացածները նրա աշակերտների
զրածներն են, աւելի կամ նուազ յաշող նմանո-
ղութիւններ՝ դարերի մէջ խանուած հանձարեղ
վարսեափ գործերին, և սրանով կարելի է բա-
ցարել Խայեամին վերագրած քառեակների մէջ
անթիւ կրկնութիւնները իմաստի ու ձեռի: Եւ
մինչև այսօր էլ գիտական հետազոտողները լկա-
րողացած վերջնական, համոզիչ կերպով գտելու
վարպետին աշակերտներից. հետևապէս բոլոր
թարգմանիչները ընտրութիւնը կատարել են
իրենց ճաշակի համաձայն, ինչպէս և մեր թարգ-

մանիչները, որով, գուցէ ընթերցողը խայեամի
իսկական քառեակներից մի միայն մի քանի
հատն է, որ կարգում է:

Այդ 1000 քառեակից միայն 110 հատ է ըն-
տրել անզիացի համբաւաւոր թարգմանիչ Ֆայմանի
բարգչը, ոյոյնչափ Գերմանացիները, օրինակ, Պրէ-
գոնի, և Ցավոհի. 158 Հայերէն անդրանիկ
թարգմանիչը Գ. Փառնակ, 242 Լ. Մեսրոպ, 193 Պ. Միքրայեան:

Հարցը հիմն այն է. թէ Խայեամի անոնով
քառեակների մեր թարգմանիչները ինչքան չա-
փով հարաւարու ու հաստարիմ կարողացել են
Հայերէն ճեկի տակ արտայայտել նրանց մէջ
ուղւուած զացոցամերի ու խոների ոնն ու գոյնը,
ուժն ու ինքնութիւնը:

Մենք պարսկերէն չգիտենք, հետևապէս ան-
կարող ենք այդ մասին մեր առարկայական կար-
ծիքն ունենալ. սակայն նկատի ունենալով հայ
թարգմանիչների պարսկագիտութիւնը, և մա-
սանանդ Պ. Յ. Միքրայեաննին, որ հուսւ պարս-
կագէտ է, հին և կարող թարգմանիչ, պէտք
է ա priori ընդունել զոնէ նրա ճեռնահասու-
թիւնը:

Փորձում ենք մի բաղդատութիւն անել, ա-
ւելին անկարելի թերթիս ուղղ էջերի համար:

Զեռիք տակ ունիմ E. Fitzgerald. Les Ra-
baviyat d'Omar Khayyam-ի Ֆրանսերէն թարգ-
մանութիւնը Ch. Grolleau, Գերմաներէն,
P. Tausig. die Rubayat des Omar Chayyam.

Ici, avec un morceau de pain sous les bran-
ches,

Un flacon de vin, un livre de vers... et Toi
Devant moi chantant dans le desert...
Et le desert sera mon Paradis.

—

Ein wenig Brot hier unterm Strauch für mich,
Ein Fläschchen Wein, ein Liederbuch und
[dich,
Die in der Wildnis singt an meiner Seite.
Zum Paradiese wandelt Wildnis sich.

Գ. Փառնակինը.

Կ'ուզեմ տիկ մը սուտակ զինի և Տիկան մը.
Օրսապահէկ մը և կըս նկանակ մը հացի,
Եւ թէ ես ու զոն աւերակի մը վրայ նսած ըլլայինը,
Աւելի թաղը կ'ըլլար բան Պիտութիւնը Առւլթանի:

1. Մեսրոպինը.

Ավածք ամէն զինույ տիկ մը, երգի զիր մը,
Պատառ մը հաց, և պէտքերս ապելու չափ,
Եւ անապատն, ուր մենց նոտինց պատի թիզ հնա,
Կ'ուլույ շեզ պորախերէն սուլթանական:

2. Միրզայեանինը.

Թէ ձեզ բերէ ցորենէ
Կարող լինս երկու հաց,
Գինուց մէկ կատ երկու լիմոր,
Եւ ոչխարի խորոված,
Մի կող հնատ գեղանի՝
Նասած մի տեղ աւերակ,
Հաճոյք է սա, որ լուսի
Նա որ նոյն իսկ ունի թագ:

Ընթերցողը կը տեսնի, որ էապէս նոյնն են
սրանք, բայց տարբեր նրբերանգներով, որոնց
մէջն է սակայն գեղեցիկ հրաշքը, և ինչքան հե-
ռու է Միրզայեանինը վերևի բոլոր շրսից, մա-
նաւանդ «խորովածով». բոլորովին անպատշաճ
... կամ և այնպիսի բառեակներ, մէկի կամ
միւսի մօտ, որ բնա իրար նման չեն. հեռու
իրարուց, կարծեն ներշնչութենք են, մի տեսակ
խայեամական մօտիներ. (արգէն թիցքերը դի-
թարգմանութիւններն այդ բնոյթն ունին, որ
յաբանի իսկ գերազանցում են ընազրից):

Սակայն և այնպէս, հայ թարգմանիչները յա-
ջող հայցութենք ունին, մանաւանդ Պ. Միր-
զայեանը:

Գալով յառաջաբան – ներածութերին եր-
կուսն էլ ունին առաւելութիւններ. Պ. Միսրո-
պիկը՝ մատենախօսական – պատմական զրու-
թին է, իսկ Պ. Միրզայեանինը՝ մի հետաքր-
քրական վերլուծութիւններ, ուր փայլում
է պարսկական նուրբ ու սրամիտ ճաշակը:

Պ. Միրզայեանի՝ խայեամի դիվանին կցած
թարա-թահէրի և զանազան բանաստեղծների մօտ
160 ստեղծագրութեանների մէջ կամ հրաշալի,
փոքրիկ բանաստեղծութիւններ, ուր փայլում
է պարսկական նուրբ ու սրամիտ ճաշակը:

Օրինակի համար.

Դու որ հնձ հնա, սիրուէխս,
Ընկեր լինել չես ուզում,
Ամսն գերէ էլ ինչ՛ու
Գալիս և ինչ երազում:



Մեռնում եմ ևս այս ցաւից,
Ուր իմ ծառից զնուցիր.
Կողքին նատել չուզեցար.
Եկրմիս վրայ գէ՛թ նասիր:

Ցանձնարարում ենք հայ ընթերցողների ու-
շադրութեանը այս երկու գրքերը՝ ճաշակելու
համար անհուն գեղեցկութիւնը մեզ հարազատ
արկելքի բանաստեղծութեան:

Ահ. ԽՈՎԱԿԱԿԱՆ

ԱՅԼԵՒԱՅԼԵՐՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ :: :: ::
:: :: :: :: :: ԱՌ ՀՈՐՈՅ

« Բազմավէպ »ի¹ և « Ժողովուրդի Զայ-
նը »ի² յարգելի ընթերցողները անշուշտ
հետաքրքրութեամբ հետեւեցան զրական
պայցարին, որ Հորոյի և իմ միջն տեղի
ունեցաւ:

Յաւալի է որ Հորոյ չէ կրցած թա-
փանցել զիտողութիւններու և սրբազու-
թիւններու խորը, ինչպէս նաև հայ ոսկի-
զէն լեզուին և մեր Հարց դաւանանցին և
վարդապետութեան:

Բայց մենք մեր օրինաւոր պատմախանը
կու տանց, թողլով հասարակութիւններ
զրածներէն դատել Հորոյի ուղղագայութեանը:

Երկայնաբանութիւնն աւելորդ համա-
րելով՝ միակ օրինակով մը բացատրելով
պիտի ցուցնեմ Հորոյի « հայագիտութիւ-
նը ». Ոչ ամէն ինչ որ կը փայլի ոսկի է.
Հորոյ ինքզինքը ոսկի կը ցուցնէր... պիտի
տեսնենց որ իրականին մէջ արժէր չունի
եղբա:

Ահա միակ օրինակը, փորձաբարը, « Ժող.
Զայնը » Ապրիլ 3 թուին մէջ կը զրէ.

1. 1923 Դւկու. և 1924 Յուն. - Փետր.

2. 1924 Փետր. - Մարտ - Ապրիլ - Մայիս.